

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

20-ին Հոկտ. 1861 թուակ. Մոսկվա.

Աշխիւ բարեկամ

Յովհաննէս Սայաթնովեանց.

Վերջապէս, ամիսներ եկած, ամիսներ անցած, յետմ եմ
22-դանից մի բանի բարեկամական խօսք ու զրոյց էրբե պա-
տասխանի իմ նամակիս ապրիլի 17-ից, որ գրած էր 22-դ ընդ-
դէմ 22-ր նամակին նոյն ապրիլի 5-ից, 22-մ կարող—որովհետեւ
ուսած եմ միանգամ մտածողապէս ապրել աշխարհիս վերայ և
ոչ վայր ի վերոյ ու վայրենի—չասել 22-դ ցաւելով, որ պար-
մացած եմ 22-ր, որպէս և շատ հայերի ընթացքի վերայ և ա-
մենեկն անոյցս եմ պսուհետեւ որ և իցէ բարի բան 22-ր հա-
մար առնել, որովհետեւ Դուք ամենեքեանքդ ոչինչ չգիտէք,
բացի ձեռք ու ոտք կապելուց և ջանջախելուց մի մարդ, որ
ձեր աղբի մէջ յանցաւոր էր դարձել նորանով, որ մի անօրինակ
հայրենասիրութեամբ պսքան տարի զոհել էր իւր կեանքը
22-ր համար, Գործը այնտեղ է հասել, որ ես իմ բարեկամե-
րից նոյնքան ևս, գուցէ աւելի ևս, պարտ եմ գանգատաւոր լի-
նել, բան թէ իմ յայտնի թշնամիներից, Խնդրեմներէք համար-
ձակութեանս, դժբա հնաւովի բաներ չեն, ահա կապացուցա-
նեմ 22-դ փաստերով ու պատճառներով, որ իմանաք Դուք, թէ
Հայոց ժողովուրդը ո՞րտեղ է, և Նապարեանցը որտեղ է, Նախ
և յառաջ, խօսենք Հայոց մարդերի առ հասարակ խարդախ ու
սուտ բարքի վերայ, որ իսկոյն երեւցաւ Հիւսիսսփայլի տպա-
գրութեան սկզբումը այս դարու (և անցեալ տարիքը շատ ա-
ւելի պատուաւոր եղած չեն) որպէս Հաշտարեանում, նոյնպէս
և այլ տեղերում Հայք բոլորեքեան մի սանրով են սանրած, ըստ
մենք այս րոպէիս մնանք Հաշտարեանի վերայ, Պարոն Ս. Ալէք-
սանդրեանցը ստանալով ինձանից 30 տոմսակ Հիւսիսսփայլի
համար, ուղարկում է պ. Այվազեանին, սա յետոյ, այսինքն մի
բանի շարաթից յետոյ, ուղարկում է Ալէքսանդրեանցին 30
անունների ցուցակ առանց արծաթի, և խնդրում է նորանից,
որ նա ըստարթ առնէ Մոսկվայի մէջ և հասուցանէ ինձ օրա-
գրի վճարքը. նամակը ցոյց տուեց ինձ Ս. Ալէքսանդրեանցը
առաջարկելով ինձ լուի ցուցակը, որ և ես չընդունեցի առանց
արծաթի, ի հարկէ և ոչինչ չխօսելով. Նա ստիպեց ինձ ըն-

ծաւ փափագանօք ետ գրել զսա յընթերցումն սնձին իւրոյ, և
յիշատակ հոգոյ. Եւ զմեղապարտ գրիչս Գէորգ երէց՝ ծնողօք
յիշեցէք առ Տէր յընթերցումը կամ յօրինակել և Աստուած զձեզ
լիշէ:

գունել անարժամ ցուցակը և ուղարկել Ձեզ Հաշտարեան Հիւսիսափայլ, բայց եւ հրաժարուեցայ այդպիսի յանձնառութիւնից, ասելով նորան, որ մի անկանոն գործ է, առանց հատուցումն ստանալու, օրագիրք արձակել չոր ու ցամաք անունների վերայ, Վերջապէս ասաց նա ինձ, թէ նա կարող է արժամ հատուցանել ինձ, որ վհետեւ արժամ չունէր. բայց թէ նա ինչու, ինչպէս ասած էր Այվալեանի նամակի մէջ, բարաթ չարեց ի հարկէ ոչ իմ հարցանելիքս էր և ոչ իմ առաջարկելի բանը. նամակի մէջ ասած չկար, որ նա արժամը ֆուրգովից կամ Սարիբէկովից ստանար. Այժմս լսում եմ պարոն Ֆանդէեփի և Ձեր նամակից, որ Ս. Ալէքսանդրեանցը գրել է Ձեզ մի ամենեւին խառնափնտոր, անորոշ բան, ինչպէս երևում է, ծածկելու իւր ընթացքը իմ հետ, փոխանակ ուղղակի և պարզապէս գրելու Ձեզ, թէ նաչարեանցը չկամի առանց արժամի ուղարկել Ձեզ օրագիր, գրում է Ձեզ մի անպատշաճ բացատրութիւն, որպէս թէ եւ Հաշտարեանցիքը անարժան էի համարել իմ օրագրին, կամ թէ այդպէս ըմբ գլուխ չի գայ: Այժմ նախագիտութեամբ չկամի նաչարեանցը գործ կատարել, բայց կարգով ու խելացի ճանապարհով պատրաստ է նաչարեանցը ամեն մարդու հետ գործ ունենալ, մանաւանդ իւր ժողովրդի հետ: Սորանից ահա բացայայտ ու յուսափայլ է, որ Ս. Ալէքսանդրեանցը կամելով ձեզանից թաղուն պահել իւր չյանձնառութիւնը արժամ վճարել կամ հասուցանել ինձ, այլ և կաշկով իւր անձը արդարացնել Ձեր առաջը, մեղքը ձգել է իմ վերայ, այնպէս խառնափնտրելով գործը, որ մէջ տեղում երևում է մի որոշակի բան. Բայց զարմանում եմ, որ Դուք կամ Այվալեանը չշտապեցիք իսկոյն կարգի դնել այս բանը, ուղղակի գրելով ինձ ձեր պահանջմունքը, և այժմ տարին վերջացած, աշխատում էք պատ ի պատ խօսքերով ամեն մինդ. Ձեզ արդարացնել բայց աւելորդ էր այդ, եւ դիտեմ Հայոց ազգի բարք ու վարքը, դիտեմ, որ այդ ազգի մէջ միշտ հիւանդացել է և մեռել է առողջ գործը. հիւանդի ու մեռածի վերայ ինչ խօսենք: Եթէ Այվալեանը ուղարկած լինէր ցուցակը իմ վերայ հանդերձ պատուերով արժամը ստանալ այս ինչ կամ այն ինչ անուն մարդուց Մոսկովայում, կամ թէ գոնեայ Ս. Ալէքսանդրեանցը Այվալեանի նամակի վերայ կամենար երաշխաւոր լինել ինձ, այնուհետեւ յառաջ կերթար գործը, բայց ոչ մինը չեղաւ, և ես, ի հարկէ, իմ կանոնիս վերայ հաստատ մնացի, ոչ որ չստիպել, ոչ որի Հիւսիսափայլ չուղարկել առանց երաշխաւորութեան կամ հատուցման, որովհետեւ իմ գործը վաճառականութիւն չէ, այլ յիստակ առնիք և տալիք իսկոյն: Այլ և հարկաւոր եմ համարում ասել Ձեզ, որ, ինչպէս շատ միւսները, նոյնպէս և պարոն Այվալեանը անկանոնաբար են վարուել իմ տամսակների հետ, որ արժամի ստացման վկայա-

գիրք էին իմ ստորագրութեամբք. ուրեմն առանց հասուցման երբէք կարելի չէր նորանց օտարի ձեռք տալ: Բայց եթէ հասուցած էր արծաթը, ուրեմն ես պիտի ստանայի նորան և դորժ կատարէի: Բայց, կարծեմ, մեր Հայերը մեր կլիտանցիան ստացած անդամ չեն հաւատացել մեզ, այլ կամեցած են նախ և յառաջ մեր օրագիրը ստանալ, ապա վճարել: Խոստովանեցէք առաջի Աստուծոյ և Ձեր Հայ եղբօրը, որ շատերն ևս այսպէս կամեցած են—ինչպէս ասուած էր ինձ Ս. Ալեքսանդրեանցը. և ինչ պիտի լինէր մի այդպիսի անկարգութեան հետեանքը, այդ ևս դիտենք և մինչև այսօրս մեր ազնուամտութեամբ գրեթէ 400 մանկէթի պարտքի տակ ենք: Թէպէտ ձեզանից ոչ ոք չը դիտէ և չկամի կարգ ասած բանը հասկանալ, Որ հայ ենք, արդէն պիտի բարբարոս լինինք, այսպէս կամին մեր Հայք: Թող դուրս այսպէս կամենան, բայց մեր չկամինք մեր հայութիւնը բարբարոսութիւն շինել: Դեռ շատ բան ունիմ ասելու ձեզ:

Ձեր նամակը, որի հետ ուղարկած էիք Ձեր գեղեցիկ օտանաւորը, ես ամենայն յօժարութեամբ տպած կլինէի, բայց այդ մասին դուք յայտնած չէիք ձեր կամքը. և Ձեր նամակի մէջ դովասանութիւն լինելով Հիւսիսամիայլի վերայ, մի փոքր յետ քարշուկայ, ոչ թէ այն պատճառով որ սուտ էր գրածը, ոչ այլ մի ուրիշ պատճառով, այդ մեր նախանձոտ բարեկամներից ոմանք այնպէս են կարծուած, որ ես փառասէր մարդ եմ և զովասանութիւնք եմ տպում իմ վերայ օտարների բերանից իմ օրագրի մէջ: Գիտէք, աչնիւ եղբայր Սպաթնովեանց, թէ ինչ անարժան դրութեան մէջ է մեր ազգը, մեր թշնամիքը ամենայն տեսակ ապականութիւն թափում են նապարեանցի վերայ, բայց մեր բարեկամները մտածում են, թէ նոցա պիտոյ էր լուռ մնալ, և եթէ Ձեզ պէս աշխարհական մարդիկ ջատագով ու պաշտպան դուրս գային մեզ, այդ ևս հարկաւոր չէր ընդունել, ասել է՝ նապարեանցին պիտոյ է հայհոյէ ամենայն մարդ, թշնամին իւր խօսելով և բարեկամը իւր լուռ մնալով, համաձայնել նորան: Ասացի Ձեզ վերեւում, որ այսպիսի ազգի մէջ այսուհետեւ անհնարին է ինձ գործ կատարել, ոչ թէ մեր թշնամին միայն թշնամի է մեզ, այլ և մեր բարեկամը թշնամի է մեզ, զուցէ աւելի վատթարապէս: Իմ կարծիքը Ձեր աշխարհականների վերայ այսպէս է, ինչպէս և գրած եմ իմ հրապարակական նամակի մէջ առ ազգը, որ այսուհետեւ դուք, աշխարհականքդ լաւ ու վատ հանդէս գաք, ձայն տաք, որոտաք և յայտնէք ձեր կարծիքը: Այսուհետեւ ձեզ տեղիք չկայ մտածելու, թէ ուսումնականը, գիտնականը կան ձեր ազգի մէջ. ոչինչ չկայ, սխալվում էք դուք, մի քանի վախկոտ, կիսատ միսատ անբարոյական իմաստական, նախանձոտ բարեկամներ, ահա ձեզ ձեր ուսումնականքը: Չէ, այժմ պիտի դուք բանաք, արձակէք և հնչեցնէք ձեր փական բերանը, եթէ կամիք որ ձեր սերունդքը չթքեն ձեր գերեզմանի վերայ, ինչպէս

պէս վատթար նախնիքի զերեզմանի վերայ: Այսուհետեւ դուք էք իմ դատաւորը և ոչ թէ ձեր վատթար, անբարոյական ուսումնականքը, որ միայն նախանձոտ ու նախանձարեկ իմաստականք են, անարժան մարդկային անուան: Աւելի բան ունիմ ձեզ ասելու:

Դուք պահանջում էք ինձանից, որ ես իմ գիտնական և գործական դպրոցի մասին, որ բացուելու է Մոսկուայի մէջ Տէրութեան տուած թոյլտուութեամբ, այնպէս զործ կատարեմ, ինչպէս Հայոց ազգը միշտ պահանջել է Նաղարեանցից, որ նա Հիւսիսափայլ տպէ, այսինքն առանց արծաթի նպաստաւորութեան: Դպրոցը բաց է, Տէրութեան թոյլտուութեան թուղթը ծոցումս է, բայց աշակերտ չկայ, որովհետեւ ամեն մարդ Հայերից Ձեզ պէս մտածում է և խօսում է. այսինքն թող յառաջ Նաղարեանցը մի 10, 20 աշակերտը ունենայ, ապա և ես իմ որդին կը յանձնեմ նորա դպրոցի հոգաբարձութեանը: Այդ ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոններ, Նաղարեանցը ինչպէս առնէ, որ 10, 20 աշակերտ հաւաքէ իւր մօտ, բանայ իւր ուսումնարանը, կարգաւորէ նորան, եթէ դուք, եթէ ոչ մինը ձեզանից չկամի նորան իւր զաւակը յանձնել: Խնդրեմ ասել, այդ ինչ հրաշք էք դուք պահանջում Նաղարեանցից, մի՞թէ այդքան անմտութեամբ պատժել է Ձեզ Աստուած, որ չէք կարող հասկանալ, թէ մի 10, 20 աշակերտը այն ժամանակ կը հաւաքուին Նաղարեանցի մօտ, այն ժամանակ ուսումնարանը կ'բացուի, կ'սկիզբաւորուի, կ'կարգաւորի, երբ արդէն աշակերտը կային, երբ Հայոց ծնողքը իւրեանց զաւակները յանձնած էին նորան: Դպրոցը դատարկ պատերով ու սեղաններով չէ լինելու, այլ աշակերտների ներկայութեամբ: Վամ մի՞թէ կարծում էք դուք որ Նաղարեանցը պիտի իւր դպրոցը իւր վիժիսկայով բերէ Հիւսիսափայլ տեսարանների պէս դնէ ձեր ձեռքի մէջ, որ դուք, հաւատաք նորան և յանձնէք նորան ձեր որդիքը: Ձգիտեմ, ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոն Հայեր, ինչ էք տուել ինձ ինչ էք պահանջում: Զարմանում եմ, որ դուք տակաւին կարօտ էք միւս այլ տեղեկութիւնների իմ դպրոցիս մասին, քան թէ ահա երկու անգամ հրատարակուեցան Հիւսիսափայլի մէջ: Ոչ պարէն ասած է այնտեղ թէ ծնողը զանազան բաղադրերից պարտ էին ինձ տեղեկութիւն տալ թէ քանի զաւակ այս կամ այն տեղից կամէին ուղարկել ինձ, յայտնելով ինձ իւրեանց ցանկութիւնը իւրեանց որդիների ուսումնառութեան մասին դպրոցի գիտնական կամ գործական մասումը և այլն և այլն, ոչ ապաքէն դրած են այնտեղ ամենայն ծանօթութիւնը զանազան ուսանելի նիւթերի և դպրոցի բոլոր թէ տնտեսական և թէ ուսումնական մասին, այլ ինչ միւս ծանօթութիւնը կարող եմ տալ Հայերին: Բաւական չէր որ նորա իմանալով ինձանից այդ տեղեկութիւնը, ծանօթութիւն տային ինձ ուղարկելի մանուկնե-

րի մասին, և ես իմ կողմից միտ դնելով աշակերտների բազմութեանը, զոր օրինակ 10-ի, 20-ի, զրէի ծնողներին, որ ուղարկեն տղայքը և ես պատրաստութիւն տեսանէի ընդունելու նորանց. Բայց ոչ. Հայելը մտածում են, Նազարեանցը նախ և յառաջ պիտոյ է մի բանի 1000 մանէթ ցած դնէ, տուն բռնէ, սարք կարդ հոգայ, վարժապետներ հրաւիրէ, առանց մի ծնողից ևս մի աշակերտ ստանալու Այս էք պահանջում ինձանից, ապիւր պարոն. ես չգիտեմ և հարկադրուած եմ ասել Ձեզ, որ դուք ամենայն կարգից դուրս բան էք պահանջում ինձանից, և Աստուած կարող չէ Ձեր պահանջողութիւնը կատարել ուր մնաց Նազարեանցը, որովհետեւ ձեր պահանջողութիւնը անխել պահանջողութիւն է. Ամենայն մասնաւոր դպրոց ամենայն տեղ բացուած է և բացուած է աշակերտք դառնելով. այսինքն եթէ այս կամ այն ծնողքը հաւատարմով մի արժանաւոր մարդու հրատարակութեանը յանձնում են նորան իւրեանց մանուկները և այդպէս օրէ օր բազմանում են աշակերտքը հինգից դառնալով 10, տասնից դառնալով 20, բսանից 30 և այլն և այլն, և ոչ մի ծնող չէ մտածում այնպէս, որպէս թերահաւատ Հայերը, որ թող նորա նախ և յառաջ տեսանեն, որ մի դպրոցապահ 10, 20 աշակերտք ունենայ, ապա թէ կ'տալին իւրեանց մանուկները նորան. Բայց ոչ մինը Հայերի մէջ այնքան խելք չունի, որ ինքն ասէ. իւրեան, թէ ինչպէս կարող են 10 ու 20 աշակերտք մի տեղ հաւաքուել, եթէ ոչ մի ծնող չկամի յառաջուց տալ. Գուցէ Յովսէփ Չերքեզեանցը լաւ ներգործել է ընդդէմ ինձ թող հովանայ սիրտը, գոնեայ Հայերի անմտութիւնը և Չերքեզեանցի չարախօսութիւնը լաւ հանդիպում են միմեանց. Եւ աւելի բան:

Դուք ինձ յոյս էք տալիս, որ գալոց 1862 թուականին յանձնառու էք դուք 20 ընկերագրութեան Հիւսիսսփայլի, շնորհակալ եմ. Դուք ստանում էք ահա ծանուցումն գալոց տարու Հիւսիսսփայլի մասին, որի մէջ փոքր ի շատէ բացայայտել եմ մեր Հայերի առաջն Հիւսիսսփայլի որպիսութիւնը, գործի բոլոր հանգամանքը պարզ ի պարզոյ դնելով նոցա առաջ, և Հիւսիսսփայլի գործը յանձնելով նոցա իմաստուն հոգաբարձութեանը. Այսբան տարի գործ կատարեցինք Հայերի համար. այսուհետեւ կարող չենք այնպէս, ինչպէս յառաջ. ուրեմն թող Հայերը զգաստանան, ծանաչեն իւրեանց օգուտը և վնասը և օգնեն մեզ, ապա թէ ոչ, ինչպէս հաճոյ է նոցա:

Ձեր բարեացակամ Ս. Նազարեանց:

Մոսկուա 5 յունիսի 1872.

Իմ ացնիւ Յովհաննէս Միրզարէզեանց ¹⁾.

Ձեր սիրելի նամակը անցեալ Մայիսի 18 թուականից անկորուստ հասած է ինձ, որոյ մասին խնդրեմ ընդունել իմ առ ի սրտէ շնորհակալութիւնը, մանաւանդ Ձեր առիս ունեցած վստահութեան մասին: Որ ի փորձուն հաւատարիմ է ի վերայ բազմաց կացուսցէ զնա Տէրն իւր:

Արդարեւ ինձ ևս յոյժ ցաւելի է, որ իմ տեղափոխութիւնս դէպի Բիֆլիս, այնքան զրկանքով հանդերձ, անպտուղ և ապարդիւն գտանուեցաւ, որ ես հարկադրուած էի դարձեալ տեղափոխուիլ դէպի Մոսկուա, յանձն առնելով կրկին աստապանք և նորանոր ծանր ծախք, որ միանգամայն քակտեցին և կործանեցին իմ փոքր ի շատէ նիւթական բարեկիցականութիւնը: Այս բոլոր կորուստները տանելի են ինձ, բայց մի բան անտանելի է ինձ, որ մեր սիրելի Հայերին ոգնել կարելի չէ, թէ դու զոհէիր նմա քո անձը: Մեղանում մինչև այսօրեան օրս ոչ առաջինն է յայտնի և ոչ վերջինը, այլ ամենայն ինչ վայր ի վերոյ և վայրենի, և դորա պատճառն այն է, որ մենք չունինք ոչինչ բաղաբական կեանք, որ նոյն և մի մեծ բարոյական կարգ է, առանց որոյ աշխարհիս վերայ ոչինչ կարելի չէ արգասաւորել, որովհետեւ ուղղութիւն չկայ և հասարակաց նպատակ չկայ, որ միայն կարող էր միաւորել մեր ցիր և ցան մտաւոր և բարոյական զօրութիւնքը: Այլ ինչ որ մեղանում կայ խակ ու խուկ տղայական միտքեր են, անզգամ խօսք ու զրոյցք Մեղուի մէջ Հիւսիսափայլի աշխատաւորի վերայ, որ ինչպէս կարծում են, այն պատճառով միայն անյաջող է գտանուած, որ չէ եղած ժողովրդական, ոչ իւր լեզուով և ոչ իւր գաղափարներով: Իսկ Մեղուն է միայն ժողովրդական, Մեղուն ամենեւին տղէտ հայկական լեզուի հոգուն, ուստիսօս և թաթարախօս առաւել քան թէ հայախօս, որովհետեւ ուսերէն և թաթարերէն մաածող. յսեցէք, ընթերցա՞ք այն յաւելուածը Մեղուի, Գրիգոր Արծրունի ցանցառամիտ. տղէտ իրաւաբանի գրչից, որպէս թէ Հիւսիսափայլը իւր վեցամայ ընթացքի մէջ չէ տուած ազդին, եթէ ոչ Մեսիական Հարսեր և Կիկերոնի ծառերը: Միւս ոգին, ոչինչ Ահա մեր հայկական դպրութեան դատաւորքը: Վա՛յ քեզ քաղաք որոյ թաղաւոր քո յիմար մանուկ է: Հիւսիսափայլը չէ տուել ազդին ժամանակին պատշաճ գաղափարներ, վասն որոյ չէ գտել ժողովրդի մասնակցութիւնը և այդպէս կործանուած է! ժողովրդի մեղքը թող քաւէ Հիւսիսափայլի հրատարակողը: Ես ի հարկէ ընդդէմ այդպիսի տղէտ և անամօթ խօսողների ոչինչ չունիմ, բացի արհամարհութիւնից, միայն թէ ցաւել կարող չեմ, տեսնելով որ

1) Այժմ խորէն ա. քահանայ Բագուի, որից և ստացել ենք այս նամակը:
Ծ. Խ.

այդպիսի անուս, անկիրթ և անմիտ մարդիկ հալար տեսակ մոլորութիւններ տարածում են մի անդատողական ազդի մէջ և դրանով օրէ օրէ դժուարանում է, բարոտվում է մի ճշմարիտ լուսաւորութեան ճանապարհ, կամ թէ դա ամենեւին փակվում է մեր առաջը։ Եւ ինչ լուսաւորութիւն պիտի յառաջանայ մի ազդի մէջ, ուր մարդիկ—որպէս թէ մտածող և խօսող հեղինակներ ամենայն բան դատում են և դատապարտում են առանց որ և իցէ բնութեան, առանց որեւիցէ տեղեկութեան այն իւրին, որոյ մասին կամէին կարծիք տալ։ Եւ ինչ հարկաւոր էր աշխատութիւն և դառն վաստակ յանձն առնուլ բնեւոր, ծանօթանալու խնդրին, առանց զոցա ևս կարելի է դատել ու դատապարտել։ Ահա մեր լիտերատուրայի այժմեան վիճակը—մի ողորմելի վիճակ։

Իրաճուցանելով իմ դէմքը այդ խրտուիլակներից և նուրբելով իմ մտածութիւնը արժանաւոր ազդողուտ նիւթերի, ես դիտաւորութիւն ունիմ իմ ծերութեան օրերը նշանաւոր կացութեան—գոնեայ արժանապէս կնքել մի գրաւոր վաստակով, որ պիտի մնար իրեւ արձան մշտնջենաւոր յիշատակի զալոց սերունդի մէջ։ Որ է հայերէն մշակութիւնը Զօնս Վիլեամ Դրեպերի գործի (որոյ բնագիրը անգլիարէն է) մակագրութեամբ «պատմութիւն իմացական պարզացման Եւրոպայի» որոյ կիսակատար թարգմանութիւնը ուսերէն գուցէ յայտնի լինի Ձեզ անուամբ «История интеллектуального умственного развития Европы»։ Դորա հայերէն մշակութիւնը անգլիական բնագրի կկացուցանէ զոնէ 1000 երես, և բնագիրը բաժանած 2 հատոր։ Տպագրութեան ծախք 2000 ման. իսկ աշխատութեանը, որ կարօտ է զոնեայ 2 տարու—4000։ Ես կամէի այդ գործը տպագրել 100 ատորագրողների օգնութեամբ կամ նպաստով, որ կացուցանելու էր վաթսուն վաթսուն ման. որոյ փութարէն ամեն մի ստորագրող ստանալու էր 12 օրինակ, ուրեմն 5 ման. երկու հատորին. և բնագիրը և ուսաց թարգմանութիւնը շատ աւելի արժան է։

Ես կամէի տակաւին աշխատել մեր հայերի համար, մինչև կհասներ իմ կեանքի օրերի երեկոն, և աշխատասիրել մի արժանաւոր, մշտնջենաւորապէս արժանաւոր գործ։ Որպիսի է ձեր բարեմիտ կարծիքը և ձեր բարեացակամ մտածող ընկերների կարծիքը, իմ կարծիքն է, որ նախ և յառաջ պիտոյ է տալ ալդին օրինաւոր գրեանք, ուստի կարող էին նորա հիմնական պատրաստական տեղեկութիւնք ստանալ հասկանալու այն ճառերը, որ հրատարակվում են օրագրերի մէջ, որովհետեւ մարդկութեան ներկայ վիճակը հասկանալու համար կարեւոր է նորա անցած գնացած օրերի տեղեկութիւնը, գիտութիւն պատմութեան, բնդհանուր պատմութեան որոյ հետեւանքն է և այժմեան բարեվիճակութիւնը Եւրոպայի, որ թէ ինչ գնով է ստացած, կուսանին Հայերը վերոյիշեալ գրուածը ընթերցասիրելով։

Խնդրեմ՝ մատուցանել իմ սիրոյ և յարգութեան ողջոյն մեր բոլոր բարեկամներին, մանաւանդ Բաքուի մարդասիրական ընկերութեան նախագահին, պարոն Մովսէս Զոհրաբեանին:

Ցանկալի է ինձ իմանալ թէ մեր Շամախու երկրաշարժութիւնից անբաղդացած հայրենակիցքը որքան օգնութիւն ստացած էին ընդ ամենը բոլոր հայկական հասարակութիւններէց: Մոսկուայում տեղեկանում եմ ես, որ մեր պրօտեստանտեան հայ եղբայրակիցքը այստեղի և Շվեցարիայի կողմից ստացած են օգնութիւն 8000 ման. որ բաւական մեծ գումար. Աստուած տայ, որ և մեր լուսաւորչական Հայերը յետ չըմնային օտարականներից այսպիսի առաքինական գործով, որ է թեթեւացնել իւրեանց անբաղտացած կրօնակից և հայրենակից եղբայրների վիճակը:

Մաղթելով ձեզ յԱստուածուստ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարիք, մնամ

Ձեր,

իմ ազնիւ բարեկամ,

յարգող Սեփիաննոս Նազարեանց.

